





ձաշի ժամանակ հեռագրով ուրախութիւն յայտնեցին Գանձակի նահանգապետին և Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Խլխան Միխայիլ Նիկոլայեւիչին: Համբարները իրանց դրօշակներով շրջեցին ամբողջ քաղաքը: Յայտնի հիմնարկութիւններից չքեղ զարդարանքով աչքի էին ընկնում լէպլական, թեմական և քաղաքային դպրոցները, բոլոր ուսումնարաններում եղան աշակերտական հանդէսները:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսաց գործակալութիւնը հաղորդեց, որ սուլթանը հրաւիրել է անգլո-հայկական ընկերութեան ներկայացուցիչներին գնալ Կ. Պոլիս խորհրդակցելու Փոքր-Ասիայում մտցնելիք բարենորոգումների մասին: Մանրամասնութիւններ, որոնք մինչև այժմ յայտնի են այդ հրահրի մասին, հետեւեալն են: Վիեննայի ժուրնալիստ Նեվլինսկի, որ գնացել էր Կ. Պոլիս, սուլթանի հրահրով, առաջարկել է սուլթանի անունից Լոնդոնի կոմիտեան, որ սա ուղարկել Կ. Պոլիս մի պատգամաւորութիւն՝ ներկայացնելու թիւրքաց կառավարութեան իր հայեացքները և խորհրդածութիւնները հայկական խնդրի մասին: Անգլիական «Daily News» լրագիրը այդ առիթով ասում է հետեւեալ. «Մամուլի ընկերակցութիւնը տեղեկացել է, որ սուլթանը հետագրել է Լոնդոն հրաւիրելով անգլո-հայկական ընկերութեան կողմից մի պատգամաւորութիւն՝ գնալու Կ. Պոլիս բարենորոգումների գործերի մասին խորհրդակցելու համար»:

Ուսումնասիրի դուրսը ստացել է Էրզրումի նպատակով մասնաժողովից հետեւեալ տեղեկութիւններ: Էրզրումի նահանգապետը տեղեկացել է, որ Բայբուրդի համար նշանակված է 600 լիւրա, որով պէտք է բաժանվի սերմացու 12,000 կարօտեալ հայերին: Տեղական մասնաժողովը նայնպէս բաժանել է 1300 լիւրա դաւառում: Մօտ 200 լիւրայի արժողութեան սերմ ուղարկված է Խոնիս: Ինքը կառավարութիւնը ոչինչ ձեռք չէ առել այդ նպատակով: Սակայն Էրզրումի նահանգապետը հրամայել է քիւրդերին յետ խլել հայերի անասունները: Մասնաժողովը մինչև այժմ ունեցել է 8000 ֆունտ, որով օգնել է 12,000 անձի:

Խարբերդից ստացած տեղեկութիւններին նախելով քիւրդերը կողոպտել են այն հայերին, որոնց բաժանված էին նպատաներ:

Բէյութի գործակալութիւնը հաղորդում է հետեւեալ. «Զէյթունից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այնտեղի թիւրք պաշտօնեաները պահանջում են հարկերի ապառիկները, չը նայելով որ թիւրքիսն պաշտօնապէս խոտացել է վեց պետութիւններին՝ չը պահանջել այդ տուրքերը: Երկու կայ, որ զէյթունցիները կարող են այդ պատճառով նորից յուզվել»:

Լոնդոնից հեռագրում են «Новое Время» լրագրին մայիսի 22-ից. «Լոնդոնի անգլո-հայկական շրջանները մեծ յոյսեր են դնում Կրեմլ կղզու ապստամբութեան վրա, սպասելով նոր խռովութիւնների թիւրքիայում: Այդ աղիտատօրները, ըստ երևոյթին, բոլորովին համոզված են, որ չարժեքը այս ամառ կը տարածվի և Մակէդոնիայում: Այն սերտ կապը, որ կայ Կրեմլ կղզու ապստամբութեան և Մակէդոնիայում սկսվող յուզման մէջ, հետզհետեւ ակնհայտ է դառնում, չարժման աղբիւրը ընդհանուր է երկու տեղերում ևս և զրա անկասկած ապացոյցները արդէն գտնվում են Կ. Պոլսում»:

Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, մայիսի 23-ից. «Երէկ, Պէրայում, ձերբակալվեցին հայ աղբուրների պատկանող բոլոր հեռագրական պաշտօնեաները»:

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ

Երէկ հեռագիրը հաղորդեց, որ ֆրանսիացի նշանաւոր գրող և պետական գործող Ժիւլ-Սիմոն

վախճանվեց Պարիզում, 82 տարեկան հասակում: Երեսուն թուականներին նա փրկափախութեան պրօֆեսոր էր բարձրագոյն դպրոցներում, իսկ յետոյ նուիրեց իրան քաղաքական և գրական գործունէութեան: Հասարակագետական գաղափարների համար կուտոնների չարքում Ժիւլ-Սիմոն շատ պատկառելի տեղ է բռնում: Թէ 1848, թէ 1870 թուականներին նա մեծ դեր կատարեց, իբրև կազմակերպող հասարակագետական հիմնարկութիւնների: Իբրև գրական գործող, նա յայտնի է փրկափախական, հասարակական, մանկավարժական, ընդհանուր գրական, բանասիրական վերաբերեալ աշխատութիւններով: Նրա փրկափախական գրութեաների մէջ նշանաւոր տեղ են բռնում հետեւեալ աշխատութիւնները. «Le Devoir» (Պարտաւորութիւն), «La Religion naturelle» (Բնական կրօնը), «La Liberté de conscience» (Խղճման ազատութիւնը): 1889 թ-ի Պարիզի աշխարհահոգիի ժամանակ նա գրողների միջազգային կոնգրէսի նախագահ էր: Մինչև իր կեսանքի վերջին բաժնի նա չէր դադարում դանդան փրկափախական և մանկավարժական յոգնածները գրելուց ֆրանսիական յայտնի հանդէսների մէջ:

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԻՔԻՍՅԻՅ

Կ. Պոլիս, մայիսի 15-ին  
Զարեքաբերդի օր, 8 մայիսի, իսկէնտէրու էն (Կիլիկիա) Պոլսոյ նահանգապետը հասա Մէսաթըրիի Բոնիկ օ չոգենաւը, մէջն ունենալով 52-ի չափ հայ ընտանիք, որոնք հայրենի երկիրը թողած և այդ չոգենաւն ապաստանած էին, Ամերիկա գաղթելու համար, այլ ևս չը կրնալով ապրիլ թրքական խժգոնութիւններուն սատակութեան ներքին Շոգենաւը հազիւ թէ քարայրներուն մօտեցած էր, և ահա առարկայ եղալ թուրք ոստիկանութեան յիմարական յարձակումներուն, և ծնունդ տուաւ չարք մը անհաճ միջադէպներու, որոնք եւրօպայներու համար նոր և փայլուն ապացոյցներ մատակարարեցին թրքական անողորմ լայնարժեքեան:

Կառավարութիւնը տեղեկութիւն ստացած ըլլալով որ հայ յեղափոխականներ կը գտնուին այդ չոգենաւին մէջ, կը պատրաստուի ձերբակալել զանոնք, 30 էն աւելի ոստիկան կը յարձակին չոգենաւին վրա ու կը սկսին բռնութեամբ դուրս հանել հայերը: Բոնիկ օ չոյի առաջին նաւապետը, որ միանգամայն ծովային սպայ մըն էր, կը հրամայէ նաւաստիներուն դուրս նետել թուրքերը, նաւաստիները մեծ զօրութեամբ կը յաջողին կատարել նաւապետին հրաման, իբր զէնք գործածելով նաւին ջրհանները և անխնայ ողողելով այդ անկոչ հիւրերը, որոնք զաղանի յամառութեամբ տակաւին չէին ուզեր բաժնուիլ իրենց որսերէն: Ոստիկանները, ջրաթափաւ, վերջապէս կը ստիպուին հեռանալ, խաղաղակ կերպարանքով ու հայհոյութիւններ ժայթքելով նաւապետին դէմ, որ չափ անհաճոյ բարեբեք մը ընել տուած էր իրենց:

Թիւրքերը վատիլ չը գիտնէ սակայն, երկու ժամ ետքը նահանգապետի վերադառնալ Տիւրքի վաշային թարգմանը, յոյն երիտասարդ մը, չոգենաւ երթալով նաւապետին կը ներկայանայ ու այնպէս կը ձեռնցնէ թէ ֆրանսիական դեսպանատունը գիմած և արտօնութիւն ստացած է, ուղևոր հայերը յանձնուելու համար: Նաւապետը քաղաքակալութեամբ սրած կը հրաւիրէ խաբէրան և դեսպանատնին խորհրդական Պ. Լապրիւ-յիւի կողմէն երկուող մը կը պահանջէ, մարդը կը չուարի, «բերանացի հրաման մըն է» կըսէ: Նաւապետը կրկն կտրած «զոն աղտոտ ստալոս մըն ես, կը պոռայ անոր երեսին, ու ես իբրև չոգենաւին հրամանատարը և զինուորական մը պէտք էր, որ քեզ ապականէի, սակայն չեմ ուզեր ձեռքս աղտոտել, աղտոտ մարդու մը դպչելով, դուրս կորսուէ եթէ չես ուղէր, որ ոտքի հարուածներով չը վրնտեմ քեզ»:

Տիւրք-փաշային թարգմանը, ահաբեկ, պոչին վրա նայելով ես կը դառնայ: Թուրք կառավարութիւնը այս երկու անգամ և իր գործելու կերպին արժանի խաղաղակ դերձեցնեալ ետքը միայն կը մտածէ ֆրանսիական դեսպանատունը գիմել: Պ. Բամպոն կը մերժէ կառավարութեան առաջարկը, յայտարարելով որ զոգենաւը իբր ֆրանսիական հող անբռնաբարել է և ամեն ջուրերու մէջ: Արդէն նաւին հրամանատարն ալ քանի մը անգամ կրկնած էր թէ

նոյն իսկ եթէ Պ. Բամպոն հրամայէ, որ ձամբարը հայերը յանձնուին, ինք պիտի չը յանձնէ: Կառավարութեան ուրիշ բան չը մնար ընելիք, բայց եթէ ոստիկաններով ծովի և ցամաքի կողմէն պաշարել Բոնիկ օն, որպէս զի հայերը դուրսի հետ հաղորդակցութիւն չունենան: Հետեւեալ օր, հինգշաբթի, քանի մը ֆրանսիացի-ներ չոգենաւ կերթան, ողջերթ մաղթելու իրենց բարեկամներուն. այս անգամ ալ թուրք ոստիկանները իրենց կոչուութեան ապացոյցները կուտան, արգելել ուղեւոր դանոնք և հայհոյելով, Պ. Բիւլետա ապտակ մը կիջեցնէ ոստիկանի մը և դեսպանատնն պաշտօնեայ մը այնքան ծանրապէս կը նախառուի թուրք ոստիկանէ մը, որ ֆրանսիացին ոստիկանին պաշտօնանկութիւնը կը պահանջէ և անմիջապէս գոհացում կը ստանայ:

Հինգշաբթի, իրիկունս դէմ, Բոնիկ օ կը մեկնի Պոլսոյ նահանգապետէն, յաղթական գնացելով: Նաւին կամուրջին վրա խմբուած էին հայ գաղթականները, որոնց մէջ նաւին հրամանատարը կը նշարուէր պաշտօնական ոսկեծածուկ համազգեստով: Ֆրանսական կառավարութիւնը 80,000 ֆրանքի տուգանք մը կը պահանջէ Դրուսի, ֆրանսական հողի բռնաբարութեան համար:

Ո՞վ պիտի գոհացում պահանջէ սակայն այն սպանութիւններուն համար, որոնք 15 օրէ ի վեր կը գործուին խորհրդաւոր պարագաներու մէջ և ստիպում կը պատճառեն Պոլսոյ ժողովրդին: Այս անգամ զոհերը կիսաշարժիկ կիներու զաւակն են ու հարուածները կուգան ուղղակի պալատէն: Տեղական թերթերը միշտ լուրջեամբ կանցնին այդ ոճրագործութիւններուն վրա, նոյն իսկ «Մոնիթօր» և «Միամպուլ» թերթերը մէկ-երկու օրուան համար դադարման դատապարտուեցան: Պէշիկթաշի մէջ Պ. Լամպարտին ու իր աղջկան վրա գործուած սպանութեան փորձը հրատարակած ըլլալուն համար, աղջիկը սպաննուեցաւ ու Պ. Լամպարտին վիրատուուեցաւ. այդ մարդը պալատական երաժիշտ մըն էր, իսկ աղջիկը բարձրաստիճան պալատականներու հետ յարաբերութեան մէջ կը գտնուէր:

Նոյնպէս պալատականներու վրէժնաբերութեան զոհ գնաց Բամպոն անուն յոյն աղջիկ մը, որ Բերայի Թաքսիմ փողոցը իր տան մէջ սպաննուեցաւ, մօրը և հայ սպասաւորին հետ: Ոստիկանութիւնը քիչ մը աղմուկ հանելէն ետքը այս զէպքին երջը, վճռեց թէ սպանիչը հայ սպասաւորը չարք մը, իսկ ետքը ինքզինքը սպաննած (!). այս անհեթեթ կարկանդակ արժեքը լաւ ըմբռնելու համար պէտք է աւելցնեմ, որ հայ սպասաւորին զուլը բոլորովին անջատուած էր մարմնէն...

Պայրամին առաջին օրը ֆրանսիական դեսպանատնն առաջին թարգման Պ. Ռուէի երկու աղջիկները կը չրջադաշին Բերայի մեծ փողոցում, աղաւթնաքի սպասաւորի մը ընկերակցութեամբ, երբ երբ թուրք զինուոր աղջիկներուն վրա կը յարձակին ու կը սկսին շատ ըրիտ և զանազակ փափայել ու գգոնել զանոնք, աղաւթնիացին անմիջապէս աղջիկները խանութ մը կը մտցնէ և սուրը քաշելով զինուորներուն վրա կը յարձակի, զժաղաղաբար զինուորները կը յաջողին փախչել, առանց հարուած մը ընդունելու, մինչդեռ բաղմամբ ոստիկաններ առանց միջամտելու հանդիսատես միայն կը ըլլային: Պ. Ռուէ եղբայրները իմանալով պալատ կերթայ և գոհացում կը պահանջէ: Դէպքին հանդիսատես ևս ողող ոստիկանները պաշտօնանկ կը ըլլան և Սուլթանը կը հրամայէ Սպարապետին, որ այդ երեք զինուորները գտնելով խիստ պատիժներու ենթարկէ:

Քանի մը թուրք զինուորականներ, չի գիտցուի ինչ պատճառաւ, ուղծուելով սպաննել կը փորձեն պալատին ծանօթ ջուրկանաւոր վանդակ պէնք, սակայն հարուածները վրիպելով մարդը կը յաջողի ազատիլ. հիմակ վանդակ պէնք լրտեսներով կը պտտի, կեանքին ապահովութեան համար:

Թուրք զինուոր մը Բերա, անգլիական դեսպանատնն գիմեց, զայնուով սպաննեց քանի մը, այս անունով կը կոչուին հոս զինուորական ոստիկանները:

Դարձեալ թուրք զինուորական մը Բերայի մէջ անվայել ընթացքի մէջ գտնուեցաւ Պ. Ռուէի երիտասարդ տղուն դէմ, երիտասարդը գաւազա-

նի հարուած մը իջեցուց զինուորականին զլուռն. թէպէտ ձերբակալուելով Կալաթա-Սէրայ տարուեցաւ, սակայն ով ըլլալը իմանալով անմիջապէս ազատ ձգեցին:

Ու ասոնք ամենքն ալ անպատիժ կը մնան, ինչ ընէ Սուլթանը. ստիպուած է չոյել բանակը, երես տալ զինուորներուն, ասոնք միայն կրնան տապալել զինքը և վերջ մը տալ իր ըմանած իշխանութեան:

Պ—ի

ՆԱՍԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

Թէ հրան, մայիսի 13/25-ին

Շահի սպանողը, Միրզա-Մանուգ-Ռիզա դեռ մինչև այժմ չէ հաղորդած ոչ մի որոշ պատճառայո սպանման չարժաւոր լիւրագրերում: Շատ ընտելութիւններից յետոյ, գործը հանգում է Շահ-Ջէմալէզզինի գրկում, և այստեղ խօսվում է իբր թէ Շահ-Ջէմալէզզինը Կ. Պոլսում արդէն ձերբակալված է և թէ հրան պիտի բերվի: Մի քանի զաղտնի ձերբակալութիւններ ևս եղել են: Վերջերս երկու սէյիդ գնում են պալատ և ուզում են ներկայանալ սաղաղամբին: Իրանը կասկածելի անձնաւորութիւնների տպաւորութիւն թողնելով՝ խուզարկվում են և իրանց զլուր կանաչ ամանայի մէջ գտնվում է մի-մի ատրճանակ, որով պիտի սպաննուր փորձ անէին սաղաղամբի անձնաւորութեան դէմ, իսկայն ձերբակալվում են: Մի սէյիդ ևս ուզում է տեսնել Շահի սպանողին, նա ևս խուզարկվելով՝ մի ատրճանակ է գտնվում իր մօտ. խոտովանում է, որ ուղեցել է այդ ատրճանակով Միրզա-Ռիզային սպաննել, որպէս զի գործի մանրամասնութիւնները փակ մնան: Այդ սէյիդը ևս ձերբակալված է:

Մուղաֆէլէզզին Շահի ամսիս 11/23-ին Միւսնան թողել է և, կարծում ենք, որ մինչև 15 օր թէ հրան կը լինի: Բայց դեռ անյայտ է, թէ արդեօք ժամանակուց անմիջապէս պիտի բազմէ զահ, թէ ամառանցներում պիտի սպառէ մինչև մուհաւամ և սափար ամիսների վերջը, որ յետոյ զահ բազմէ, քանի որ այդ երկու ամիսները սուրբ ամիսներ են և դժուար է զահ բարձրանալ:

Երկրի բոլոր մասերում խաղաղութիւն է տիրում, բացի Պարսի նահանգից, ուր շատ թանգութիւն է և վաճառականների մեծաքանակ ապրանքներ ձանաղապներին աւաղակները կողոպտուել են:

Շահի սպանութիւնից մի քանի օր յետոյ՝ թէ հրան է հասնում թիւրքաց արտաքոյ կարգի դեսպան Մուհիթ-փաշան, որը ուղարկված էր Շահի յօրեկանի առիթով: Դեսպանն իսկոյն ներկայանում է սաղաղամբին և իր խորին ցաւակցութիւնը յայտնում: Երեք-չորս օրից յետոյ Մուհիթ-փաշան այստեղ իբրև դեսպան նշանակվեց, բայց անմիջապէս իր հրաժարականը ներկայացրեց սուլթանին: Դեռ յայտնի չէ, թէ արդեօք սուլթանը կընդունէ իր հրաժարականը, թէ ոչ:

Բիւզըօվ, ռուսաց դեսպանը, որ Պետերբուրգ էր գտնվում, շտապեց թէ հրան հասնել և ներկայացաւ Սաղաղամբին:

\*\*\*

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Neue Freie Presse» հաղորդում է, որ մակէդոնական կինստրումական կոմիտէտը մի չրջաբերականով, որը ստորագրել է գէնէրալ Նիկոլայ-յէվ, յայտնում է, թէ քրիստոնեաների վրէժակ Մակէդոնիայում չէ փոխվել, չը նայելով Բ. Գրան խոտուումներին և թէ պէտք է ընդհատել բանակցութիւնները բոլորական կառավարութեան հետ և մշակել լէֆօրմների նոր ծրագիր:

«НОВОСТИ» լրագրին հեռագրում են Վիեննայից, որ Կ. Պոլսի անգլիական դեսպան Կերրի նշանակվում է դեսպան Պարիզում՝ լորդ Դիւֆֆէրինի տեղը:

Բէլգրադից հեռագրում են «Kölnische Zeitung» լրագրին, որ սերբիական մինիստր-նախագահ Նովակովիչ մշակել է համաձայնութեան մի ծրագիր Սերբիայի, Բուլղարիայի, Չեքոսլովակի և Յունաստանի մէջ՝ Մակէդոնիայի խնդրի առիթով: Թիւրքիայի անկան զէպքում, այդ պետութիւնները կարող են այդ ծրագրի հիման վրա խաղաղ կերպով բաժանել իրանց մէջ Մակէդոնիան:

—Կ. Պօլից հեռագրում են. «Գիտադրամար, չը նայելով թիւրքաց կառավարութեան պաշտօնական հերքումներին, սուլթանի հիւանդութեան մասին տարածված լուրերը ճշգրտում են: Արդու-Համիդը հիւանդ է ողնաշարի ուղեղի խանգարումով և նրան հարկաւոր է կատարել հանգստութիւնը»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Նիժնի-Նովոգորոդ, 28 մայիսի: Մայիսի 27-ին հասա ֆինանսների միւնիստրը: Կայսրանից զընաց ցուցանանքները, որը ընկնէ ուղարկութեամբ: Յուշանդանքներ չիստեղծել չառ առաջացել է: Վաղը կը կայանայ ցուցանանքների բացումը:

ՊԱՐԻՉ, 28 մայիսի: Մայիսի 27-ին վախճանվեց ժիւլ Սիմոնը:

ԲՈՒԿԱ-ՊԵՇ, 28 մայիսի: Պարլամենտի մայիսի 27-ին կայացած հանդիսարար նիստին ներկայ էին թագաւորական տան բոլոր անդամները: Մարմանների պարտքի փոխանարարների ճառից և հարգանքների մասին օրհներ ընթերցումից յետոյ, նիստը փակվեց և պարլամենտի անդամները թափուրով գնացին Օֆենբերգի Զօֆարուրը: Կայսրանից թագաւորին հաւատարմիմ հպատակութեան զգացումները:

ԼՕՆԻՕՆ, 28 մայիսի: Թէհրանից հաղորդում են, որ մայիսի 26-ին Շահը մոտ գործնց մայրաքաղաքը և վաղը պէտք է ընդունի դիւլոմատիկայի մարմինը:

ԹԵՂԵՆ, 28 մայիսի: Մայիսի 27-ին կայացաւ նոր Շահի գահակալութեան հանդէսը:

ԼՕՆԻՕՆ, 28 մայիսի: Քիւրդերի մի խումբ յարձակում գործնց երկաթուղու այն մասի վրայ, որ գտնվում է Զմիւռնիայի և Կադէշի մէջ և սպանեց շատ բանուորներ: Սպանվածների թիւում գտնվում են, ինչպէս ասում են, մի քանի օտարազգի ինժեներներ:

ԿԱՅԻՐԷ, 28 մայիսի: Խօլերան հեռացնող թուղանում է:

ԿԱՅԻՐԷ, 28 մայիսի: Մայիսի 27-ին խառն դատարանը կայացրեց վճիռ: Եփրատի կառավարութեան և պետական պարտքի զրամարկի չորս կոմիտաների դէմ յարուցած դատի առիթով: Դատարանը գտն է, որ պահանջի ֆոնդից սպանա տարը Գոնդուլայի արշաւանքի համար ընդունված կանոնների եղծում է և դատաւարներ է կառավարութիւնը վերադարձնել տուած գուծարները 50/0-ի վճարումով, բայց զրանից վճարել դատարանական ծախսերը:

ՄՍՍՍՈՎԱ, մայիսի 28-ին: Մայիսի 26-ին, Բաղադիքի դործի առիթով, վերջացաւ ամբաստանվածի հարցաքննութիւնը և սկսվեցին վկաների ցուցմունքները:

ԼՕՆԻՕՆ, 29 մայիսի: Կայրէից պատերազմական միւնիստրը ստացել է պաշտօնական հեռագիր, որից երևում է, որ լուսաբացին Արշէր փաշան յանկարծակի յարձակվել է դէրվիշների վրայ, ջարդել է նրանց և ձիաւոր զօրքով կորել է նրանց նահանջման ճանապարհը: Անգլիայի ներքին ձեռքն անցաւ դէրվիշների բանակը, ուղեւորի, ձիաների, ջորիների և պաշարանքների հետ: Անգլիացիների կողմից չը կայ և մի հատ վիրա-

ւորված օֆիցեր, ոչ մի զինուոր: «Times»-ին հաղորդում են Սուլթանից, որ խալիֆը հրամայեց անցնելներում կատարան պաշարած դէրվիշներին նորից շարժվել դէպի այնտեղ և նորից պաշարել այդ բերդը: Բուլուլայից հաղորդում են, որ մայիսի 25-ին անգլիական զօրաբաժինը, որ ունէր Մարսիմի թնդանօթներ, յարձակվեց մաթաբէլների վրա խմելի մօտ, Բուլուլայից մի քանի մղոն հեռու, և ջարդեց թնդանօթները: Մաթաբէլները կորցրին 150 հոգի սպանված, իսկ անգլիացիները միայն 3 հոգի:

ՍՈՒԱԿԻՄ, 28 մայիսի: Մէնէլիքը յայտնեց Արդուլլահ խալիֆին պատրաստակամութիւն օգնել զէնքով այն կռիւ մէջ, որ խալիֆը վարում է խալիսայի բարեկամների դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍԱ

Մայիսի 28-ին

|                                              |             |
|----------------------------------------------|-------------|
| ԼՕՆԻՕՆԻ վրա 10 ֆունտ արծէ . . . . .          | 94 ր. 10 Կ. |
| Բերլինի վրա 100 մարկ . . . . .               | 45 87 1/2   |
| Պարիզի վրա 100 ֆրանկ . . . . .               | 37 32 1/2   |
| Ոսկի . . . . .                               | 7 50        |
| Մարտային կուպոններ . . . . .                 | 149 2       |
| Բորսային դիւկնոտ . . . . .                   | 5 70 1/2    |
| 4 1/2 0 պետական ընդհան . . . . .             | 99 1/2      |
| Կերքին 50/0 առաջին փոխաւորթ . . . . .        | 287 2       |
| — երկրորդ . . . . .                          | 252 1/2     |
| 50/0 զրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . . . .    | 212 2       |
| 50/0 պետական երկաթուղ. ընդհան . . . . .      | 100 3/8     |
| 40/0 ներքին փոխաւորթեան . . . . .            | 93 1/4      |
| 4 1/2 0 զրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . . . . | 101 1/4     |
| Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. . . . .      | —           |
| 4 1/2 0 վկայալ. դիւլ. հոլ. բանկի . . . . .   | 100 3/4     |
| Փոխ. կրեդիտ. ընկեր. մոնա. . . . .            | —           |
| Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . . . .        | 101 5/8     |
| Ընկերութեան օրիգայիները . . . . .            | 101 1/4     |
| Մոսկուայի քաղաք. օրիգայիները . . . . .       | 101 2       |
| Օղէտայի . . . . .                            | 98 1/4      |
| Թիֆլիսի . . . . .                            | 101 1/2     |
| Թիֆլիսի կալ. բանկի 60/0 . . . . .            | 99 2        |
| 50/0 . . . . .                               | 101 1/2     |
| Քուլմայի . . . . .                           | 99 1/2      |
| 50/0 . . . . .                               | 99 1/2      |

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՆԴԻՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԻՐԷԱՍ ԱՐՇՈՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՍՍՍՈՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

Քաղաքի կենտրոնում, ԲՕԼՂԱՅԱ ԳՄԻՄՐՈՎԿԱ (Большая Дмитровка) փողոցի վրա արվում են

ՎԵՐՍԱԼ

Շքեղ կերպով կահաւորված ՀԱՄԱՐՆԵՐ: Բնակիչների համար կան ամեն տեսակ յարմարութիւններ՝ ՏԵԼԵՖՈՆ, ՎԱՆՆԱ, ստացվում են ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՅ լրագիրներ և այլն: ԳՆԵՐԼ ԶԱՓԱՆՈՐ ԵՆ:

1—20 (№ 62) Բ. ԱՆԵՏԻՍԵԱՆՑ

Բնակարան փոխադրված է Պանասէ-Եփեան փողոց, № 1, տուն երեսփոխանի:

Մերսոպ քահանայ ՄԵԼԵԱՆ (№ 62) 1—3

Յանկանում եմ ստանալ ՀԱՇՈՒԱ-ՊԱՆԻ ԿԱՐԳՈՐԾԱԿԱՆՍՈՐԻ պաշտօն: Աւարտել եմ քաղաքային դպրոցի ուսումը: Հասցէն. Саперная улица, д. Арутинова, № 19. 1—2 (№ 62)

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ

Նախկին տարիների պէս այս ամսու վայրէթացքում ևս ընդունում է ԷՍՍԵՆ-ՏՈՒԿՈՒՄ ներքին և փոքի հիւանդութիւն ունեցողներին: (№ 60) 3—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ վեցերորդ դասա-

տան մի աշակերտ

ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ

ԲՕՐԺՕՄՈՒՄ

ամառային ամիսների ընթացքում: Յանկացողները թող դիմեն յիշանաղին զրաւարան» (վերլուծութիւն կայացր փողոց, № 5), առաւօտեան 9—1 ժամը: (№ 60) 3—4

ՊԱՆՍԻՕՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻՉՈՒՄ)

Ընդունում է ճիւղեկ, կիսաթոշակաւոր և զիշերօթիկ աշակերտներ, պատրաստում է գրեւադիւններ, կազեաների կորպուսի, զեմէմէնի, ըէալա կան ուսուցիչ արաններ համար: Ուսուցիչական տարվայ վարձն է փոքր պատրաստակների համար 60 ռուբլի. մինչև երկրորդ դասատուն 100 ռ. երկրորդից վեր՝ 150 ռուբլի: Այս տարի գինեպահ և ըէալական ուսուցիչարան մանկու համար ընդունվին տող 12 աշակերտներից 11 հոգի յաջողութեամբ ընտրվին են տուել և ընդունվել, որ կազմում է 92%:

ՈՒՍՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՍՄԲՈՂՁ ՍՄԱՌ Հասցէն. ТИФЛИСЬ. Солоаки. Гановская ул., № 11. собств. домъ. (№ 47) 8—10

ՆՈՐԵՍ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ՄՍՍՍՈՎԱՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՎՈՒՄ Է «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ» Դ. խ Ա լ Ա Տ Յ Ո Ւ Շ

АРМЯНСКІЙ ЭПОСЪ

Въ Исторіи Арменіи Моисѣя Хоренскаго.

Опытъ критики источниковъ.

Часть I: Исзѣдованіе, ч. II: Матеріалы.

Москва, 1896, 8, стр. X+347+IV+80.—Цѣна 7 рубли.

(№ 160—6.)

3—3

ՀԱՇՈՒՆԵԿՇԻՌԻ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

1-ին Մայիսի 1896

| Պ Ա Հ Ա Ն Ա Գ                               | Թիֆլիսում     | Բաժիններում  | Ընդամենը      | Պ Ա Ր Տ Գ                                                   | Թիֆլիսում     | Բաժիններում  | Ընդամենը       |
|---------------------------------------------|---------------|--------------|---------------|-------------------------------------------------------------|---------------|--------------|----------------|
| 1. Գրամարկ (անձեռն թղթադրամ).....           | 302,441—07    | 336,636—59   | 639,007—66    | 1. Հիմնական դրամադրուլ (5000 բաժին-տոմսեր, 200 ռուբլ) ..... | 1,000,000     | —            | —              |
| 2. Ընթացիկ հաշիվ Պետական Բանկ. բաժնում.     | 278,701—42    | 435,200 —    | 713,901—42    | 2. Առաջին վճար բաժնետոմսերի 3-րդ շրջ.                       | 500,000       | —            | 1,535,500 —    |
| 3. Զեղջ. (Disconto) մուրհ. երկուստորադրուլ. | 2,832,004—49  | 1,334,861—55 | 4,166,866—04  | 3. Երկրորդ . . . . .                                        | 35,500        | —            | —              |
| 4. Զեղջ. մուրհ. մի ստոր. ապան. տոկոս. թղթ.  | 382,547 50    | —            | 382,547—50    | 4. Պահեստի դրամադրուլ. . . . .                              | 673,219—10    | —            | 673,219—10     |
| 5. Զեղջումն տոկոսաբեր թղթ., կարծու. և այլն. | 61,723—96     | 5,933—64     | 67,657—60     | 5. Գրամադրուլ չիջուց. անշարժ կալուածքի.                     | —             | 2,499—33     | 2,499—33       |
| 6. Փոխաւորութիւն դրամականութիւնով           | —             | —            | —             | 6. Գրամական աւանդների                                       | —             | —            | —              |
| ա) Պետութիւնից ապան. տոկոսաւ. թղթերի.       | 1,423,040—68  | 729,283—04   | 2,152,323—72  | ա) Պայմանաւածութիւն . . . . .                               | 4,665,811—50  | 1,884,521 —  | 6,550,332 — 50 |
| բ) . . . . .                                | 328,328 —     | 19,000 —     | 347,328 —     | բ) ց/Պահանջ . . . . .                                       | 271,850 —     | 186,332 —    | 458,182 —      |
| գ) Ապրանքների . . . . .                     | —             | 1,076,601—43 | 1,076,601—43  | գ) Ընթացիկ հաշուով հատարակ. . . . .                         | 1,192,419—66  | 2,022,630—87 | 3,215,050—53   |
| դ) Ոսկու և արծաթի . . . . .                 | —             | 5,816 —      | 5,816 —       | դ) . . . . .                                                | —             | 78,702—57    | 78,702—57      |
| 7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր. թղթեր.        | 1,661,753—96  | 167,575—70   | 1,829,329—76  | 7. Թղթակիցներ.                                              | —             | —            | —              |
| 8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.         | 330,634—70    | 58,543—63    | 389,178—33    | ա) Նոյս հաշիւը (Loro).....                                  | 5,253,792—80  | —            | 5,253,792—80   |
| 9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամադրուլ.      | —             | —            | —             | բ) Բանկի հաշիւը (Nostro).....                               | 10,137,999—10 | —            | 10,137,999—10  |
| 10. Թղթակիցներ.                             | —             | —            | —             | 8. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութ. հետ.                     | —             | 1,202,143—49 | 1,202,143—49   |
| ա) Նոյս հաշիւը (Loro).....                  | 5,219,175—37  | —            | 5,219,175—37  | կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.                        | 1,146,046—55  | —            | 1,146,046—55   |
| բ) Բանկի հաշիւը (Nostro).....               | 10,999,781—51 | —            | 10,999,781—51 | 9. Բանկի բաժնետոմսերի անվճար կործն-                         | —             | —            | —              |
| 11. Բաժնիների հաշիւը կենտ. վարչ. հետ.       | 1,209,986—65  | —            | 1,209,986—65  | ների բաշիւը . . . . .                                       | 26,009—26     | —            | 26,009—26      |
| կենտրոնական վարչութեան հաշիւը բա-           | —             | —            | —             | 10. Չը վճարուած տոկոսներ, աւանդների,                        | —             | —            | —              |
| ժինների հետ . . . . .                       | —             | 1,271,717—16 | 1,271,717—16  | ընթացիկ հաշիւների և այլ գործողու-                           | 113,237—80    | 55,280—43    | 168,518—23     |
| 12. Գնումն և վաճառ. արժեթղթ. ըստ յանձնար.   | 97,750 —      | —            | 97,750 —      | թանց . . . . .                                              | —             | —            | —              |
| 13. Պայմանաւած մնացուցած փոխաւորութիւն.     | 20,449 —      | 16,595 —     | 37,044 —      | 11. Ստացուած տոկոսներ և յանձնարարա-                         | 105,916—28    | 57,727—45    | 163,643—73     |
| 14. Բողոքված մուրհակներ. . . . .            | 6,700 —       | —            | 6,700 —       | կաններ . . . . .                                            | 75,440—40     | 52,138—10    | 127,578—50     |
| 15. Ընթացիկ ծախսեր. . . . .                 | 27,265 86     | 22,285—36    | 49,551—22     | 12. Փոխանցիկ գումարներ. . . . .                             | —             | —            | —              |
| 16. Կանկարաւիք և սկզբնական ծախսեր. . . . .  | 2,923—10      | 6,523—83     | 9,446—93      | 13. Արդիւնք 1895 թ. . . . .                                 | —             | —            | —              |
| 17. Յետ ստացուելիք ծախսեր. . . . .          | 12,035—08     | 4,624—49     | 16,659—57     |                                                             |               |              |                |
| 18. Անշարժ կալուածք. . . . .                | —             | 50,777—82    | 50,777—82     |                                                             |               |              |                |
| Բ. Ա.                                       | 25,197,242—45 | 5,541,975—24 | 30,739,217—69 | Բ. Ա.                                                       | 25,197,242—45 | 5,541,975—24 | 30,739,217—69  |